



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1376-6

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՈՒԵՐԻ. ՄԻԱՅԵ՞Ք:

ՀԱՄԱՄԻՈՒԹՅՈՒՆԱԿԱՆ

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (Բ)

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

**16-ՐԴ**

ԿՈՆֆԵՐԵՆՑԻԱՅԻ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ


ՅԵՐԵՎԱՆ - 1929

122848  
122848  
122848  
122848

Համ. Ա. (Բ.) Ա. Ա. ազիտայրութ բաժնի ազիտա-  
ութ գրադարան

ՅԱՐԱՄԻՈՒԹՅՈՒՆՆԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ(Բ)  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ 16-ՐԴ ԿՈՆֆԵՐԵՆՑԻԱՅԻ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

16418  
A 9/36



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂՄԱՆ 1929

ԹԵՏՐԱԿԻ ՁԵՐԿՐՈՐԴ ՏՄԱՐԱՆ  
ՁԵՐԵՎԱՆՈՒՄ

Հր. № 1016. Պատ. № 712.

Գրառեալվար № 2232 (բ)

Տիրած 5000

ՀԵՄԿ (Բ)Կ-ի 16-րդ կոհսկընթերենքինը ԱՇԽԱ-  
ՑՆՔՆԵՐԻ ՆՇԽՆԵՎՈՒԹՅՈՒՆ

Համեկ (բ)Կ-ի 15-րդ համագումարը վարոշեց կու-  
սակցության հիմնական գիծը վերակառուցման շրջա-  
նի պայմաններում: Դրանից կուսակցության և բան-  
վոր դասակարգի համար բղխում են յերեք հիմնական  
խնդիրներ, այն ե' 1) յերկրի ինքուստիացման լար-  
ված տեմպ կիրառելու անհրաժեշտությունը, 2) ձեռ-  
նամուխ լինել զյուղի սոցիալիստական վերակազմման  
աշխատանքների ծավալման, 3) ուժեղացնել սոցիա-  
լիստական եարձակումը կապիտալիստական տարրե-  
րի վրա՝ նպատակ ունենալով վերջնականապես դուրս  
մղել նրանց, նպատակ ունենալով հիմքից արմատա-  
խիլ անել կապիտալիզմը յերկրի ժողովրդական տըն-  
տեսությունից՝ յերկրում դասակարգային պայքարի  
սրման պայմաններում, մի պայքար, վոր առաջ և գու-  
լիս սոցիալիստական հարձակման ուժեղացմամբ և կա-  
պիտալիստական տարրերի կողմից այդ հարձակմանը  
ցուցաբերված դիմադրություն աճմամբ:

Մեղ շրջապատող միջազգային և ներքին ամբողջ  
իրադրությունը թելադրում ե մեզ՝ կիրառել յերկրի  
ինդուստրիացման լարված տեմպ: Միջազգային դրու-  
թյունն ասում ե, վոր և մեր յերկրում սոցիալիզմ  
կառուցելու տևակետից, և կապիտալիստական շրջա-  
պատման պայմաններում մեր յերկրի անկախությու-

նը պահպանելու տեսակետից, մենք պետք ե հնարավոր չափով կարճ պատմական ժամանակամիջոցում հասնենք և զերադանցենք տեխնիկական-տնտեսական բնագավառում առաջավոր, կտպիտալիստական յերկը ներքին ներքին իրադրությունը ցուց ե տալիս, վոր մեր յերկրագործության, նրա տեխնիկալի, նրա մշակույթի չափազանց հետամնացությունը կարելի է հաղթահարել միմիայն մեր ինպուտարբայում արագ տեմոլ կիրառվելու գեղքում, վորպեսզի հնարավոր լինի մեծագույն չափով ապահովել գլուղանտեսությունը արտադրական գործիքներով և միջոցներով և այդպիսով արագացնել գլուղանտեսության սոցիալիստական վերտկառուցումը՝ տեխնիկական նոր բազայի վրա:

Վերականգնման շրջանի վերջերին յերեան յեկավ, վոր գյուղացիական մանր և մանրազույն տընտեսությունները հետագա զարգացման համար սահմանափակ հնարավորություններ ունեն, սակայն զըս հետ միասին ավելացել են նրանց հնարավորությունները՝ ողագործելու խորհրդակին սիստեմի առավելությունները և արդյունաբերության ասպարիզում նրա ձեռք բերած նվաճումները՝ կոլլեկտիվ աշխատանքի հիման վրա, մանր անտեսությունների միացմամբ՝ գյուղատնտեսության բարձրացման տեսպն արագացնելու նպատակով։ Վերակառուցման շրջանի պարմաններն առանձնապես սուր կերպով են առաջադրում գլուղանտեսության զարգացման յերկու ռեզու հարցը։ Այդ իսկ պատճառով, Համկ (թ) կ. ի 15-րդ համագումարն ասել եր, թե «ներկա շրջանում գլուղանցիական անհատական մանր անտեսությունները

միացնելու և խոշոր կոլեկտիվների վերածելու խնդիրը պետք եւ առաջադրվի վորպես կուսակցության հիմնական խնդիր գյուղաւու:

Վերջապես, սոցիալիստական ծավալված հարձակումը, յերկրի ինդուստրիացման արագ տեմպի իրականացումը և կապիտալիզմը հիմքից արմատախիլ անելու ձեռնամուխ լինելը կազմած են պրոլետարիատին թշնամի գասակարգային ուժերի դիմադրության աճուն հետ 15-րդ համագումարը մատնանշեց, վորոքաղաքի և գյուղի մասնավոր-կապիտալիստական խավերը, վորոքիահյուսվում են խորհրդալին և տնտեսական ապագարատի միքանի բյուրոկրատական տարրերի հետ, աշխատում են ուժեղացնել իրենց դիմադրությունը բանվոր դասակարգի հարձակմանը, աշխատում են պրոլետարական դիկտատուրային թշնամական ազդեցություն գործել ծառայողների և ինտելիգենցիայի վորոշ խավերի վրա, տնայնագործների և արհեստավորների, գյուղացիների և բանվորների հետամիաց խավերի վրա։ Վերջին յերկու տարվա հացամթերությունների փորձը, գյուղի կապիտալիստական տարրերի այն փորձերը, վորով նրանք աշխատում են, հացահատիկ չտալով մթերող պետական և կոռպերատիվ կազմակերպություններին, վիժեցնել շուկայի պետական կարգավորումը և խորհրդալին պետության գների քաղաքականությունը, նմանապես խորհուրդների այս տարվա վերընտրության դասերը, Շախտիի ֆնասարարների գործը, հրեատեցության ուժեղացումը, յեկեղեցական և աղանդավորական կազմակերպությունների ակտիվության աճումը, պալքարի սրումը իդեոլոգիական ճակատի բոլոր մասերում, և նման յե-

բնույթները հաստատում են, վոր կապիտալիստական տարրերը կատաղի պարքար են սկսել սոցիալիստական հարձակման դեմ:

Վերակառուցման շրջանի այդ բոլոր առանձնահատկությունները, պրոլետարիատի առջև շրջանի դրած նոր խնդիրները և վերջիններիս լուծման հետ կապված գժվարությունները վկայում են, վոր վերակառուցման օրշանը մի լուրջ բեկումն և ԽՍՀՄ-ի ռեակտական յեզ բազաբացիական գորգացման մեջ: Այդ շրջանը՝ մեր առջև դրված խնդիրները լուծելու և այդ խնդիրների հետ կապված գժվարությունները հաղթահարելու համար, պահանջում և վերակազմել պրոլետարական դիկտատորայի բոլոր որդանների և բանվոր գասակարգի բոլոր կազմակերպությունների շարքերն ու աշխատանքի մեթոդները՝ դիծ ընդունելով պրոլետարական յեզ կիսապրոլետարական մասսաների ակտիվուրյան լայն մօքիլգացիան, զյուղացիուրյան նկատմամբ պրոլետարական դեկաֆարուրյան ուժեղացումը, չափորենի յեզ միջակ զյուղացիուրյան համախմբումն ու նրանց վոճի հանելը՝ կուլակուրյան գեմ ուղղված վճռական պայմարի:

Հենց այդ ուղղությունն ունեն կուսակցության, նրա կենտրոնական կոմիտենի պլենումների վորոշումները՝ Համե (թ)Կ-ի 15-րդ համագումարից (1928 թ. ապրիլյան, հուլիսան, հոկտեմբերին և 1929 թ. ապրիլյան պլենումները), այն ե՝ կարմիր մասնագիտների կազրեր ստեղծելու աշխատանքի ուժեղացման վերաբերյալ դիրեկտիվները և այլ դիրեկտիվներ՝ Շախտի գատավարության առիթիվ, ինքնաքննադատու-

թյան լողունգը, հուլիսաւան պլենումի դիրեկտիվսերը նոր խորհրդավին տնտեսությունների մասին, նոյեմբերյան պլենումի դիրեկտիվսերը կուսակցության սոցիալական կազմի բարելավման մասին, կուսակցության դոման, խորհրդային ապահարատի դոման վերաբերյալ վորոշումները, չքավորների մեջ կատարվող աշխատանքին վերաբերյալ դիրեկտիվսերը, սոցիալիստական մրցությունը և այլն:

16-րդ կուսակոնֆերենցիալի նշանակությունը հետևյալն է.

Նա իր վորոշումներով կոնկրետացը այն խընդիրները, վորոնք կանգնած են կուսակցության առջև՝ սոցիալիստական վերակառուցման բեկման շրջանի պայմաններում.

Ժողովրդական տնտեսության դարգացման հընդագամյա պլանն ընդունելով, կոնֆերենցիան տվեց սոցիալիստական ծավալված հարձակման ծրագրը.

Վորոշեց գյուղատնտեսությունը բարձրացնելու ուղիները՝ վերակառուցման շրջանի պայմաններում, ուրվագծեց շաղկապի նոր ճեղքերի ամրացման և միջակի հարկերի թեթևացման միջոցներ.

Տվեց դիրեկտիվսեր բրուրոկրատիզմի դեմ պայքարելու խնդիրների մասին, վորոնք վորոշվում են, նախ՝ այն նոր պահանջներով, վոր առաջադրում են վերակառուցման շրջանի առանձնահատուկ պայմանները՝ պետական շամբողջ ապահարատի աշխատանքի վորակի նկատմամբ և յերկըորդ՝ նրանով, վոր յերկրում դասակարգավին պայքարի սրման հետևանքով «պետապահարատի» բլուրոկրատական խեղաթյուրումների դեմ ուղղված պայքարը դառնում ե դասակարգային պայքարի կարևորագույն ձևերից մեկը.

ուրվագծեց զործնական միջոցներ կուսակցության զաման համար, վոր կարևորագույն պայմանն է կուսակցության մարտունակությունը բարձրացնելու՝ սոցիալիստական հարձակման ընթացիկ խնդիրները լուծելու համար:

16-րդ կոնֆերենցիան վճռական հականարգած ովեց աշ թեքմանը և ընդդեց, վոր ներկուսակցական քաղաքականության գլխավոր խնդիրն և՝ կառարելապես հաղբահարել աշ վաճառքը յեզ հաշվողական վերաբերմունքը գեղի նա, վորավետեն, շնորհիվ համաշխարհյին պրոլետարական հեղափոխության զարգացման արդի բեկման շրջանի առանձնահատկությունների և շնորհիվ ԽՍՀՄ-ի տնտեսության զարգացման վերակառուցման շրջանի առանձնահատկությունների, աջ թեքումը, — վորը մի հարմարեցում և բուրժուական իդեոլոգիային, վորը նահանջում և սոցիալիստական վերակառուցման և ԽՍՀՄ-ում դաստկարգային պայքարի սրման հետ կապված գժվարությունների առջե, — ներկայումս հանդիսանում ե զըրիավոր վտանգը, վորն առանց հաղթահարելու անկարելի յե հաջող կերպով լուծել սոցիալիստական վերակառուցման խնդիրները:

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԵՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԶԵՐԴԱՑՄԱՆ ՀԵԴԱՄԸԸ ՊԼԵՆՔ

Ժողովրդական տնտեսության զարգացման հընդամյա պլանը, վորին հավանություն և տվել 16-րդ կուսկոնֆերենցիան, հանդիսանում ե մեր լերկրի սոցիալիստական վերակառուցման մեծ աշխատանքների

պլանը։ Վերջինիս մասին կարելի յե ասել նույնը, ինչ վոր ասել եր ժամանակին ինքինը Գոհելբո-ի մշակած ելեկարիֆիկացիացի պլանի՝ մասին, այսինքն՝ դա կուսակցության յերկրորդ ծրագիրն է։

Ի՞նչ խնդիրներ նպատակ ունի ապահովել կոնֆերենցիայի ընդունած հնգամյա պլանը։

**Առաջին.** Նա յելակետ ունի ապահովել արտադրության միջոցների արտադրման մասիմալ զարգացումը, վորովհետև հենց արտադրության միջոցների արտադրման ամենաարագ զարգացումն և կազմում յերկրի ինդուստրիացման հիմքը։

Արտադրության միջոցներ արտադրող արդյունաբերության մեջ դրված կապիտալները կազմում են ամբողջ արդյունաբերության մեջ դրված կապիտալների  $\frac{3}{4}$ -ից ավելին ( $78^0/0$ )։ Մինչդեռ պլանի յենթակա արդյունաբերության ընդհանուր ամբողջ արտադրանքը, հնգամյակի ընթացքում, աճելու յե 2,8 անգամ, արտադրության միջոցներ արտադրող արդյունաբերության ընդհանուր յեկամուան աճելու յե 3,3 անգամ։ Արտադրության միջոցներ արտադրող արդյունաբերության զարգացման առանձնապես բարձր տեմպը հնարավորություն կտա, հնգամյակի վերջում, թուջի (չուգունի) արտադրությունը հասցնել 10 միլիոն տոննի՝ ընդդեմ 1927—28 տարում արտադրված 3,5 միլ. տոննի, ածուխի արտադրությունը հասցնել 75 միլիոն տոննի՝ ընդդեմ 1927—28 տարվա 35 միլ. տոննի, քիմիական պարարտանյութերինը հասցնել ավելի քան 8 միլիոն տոննի, ընդհանուր մեքենաշինության արտադրանքը հասցնել 2 միլիարդ տուրլու, գյուղա-

տնտեսական մեքենաշինարարության արտադրանքը  
1927—28 տարվա 153 միլ. սուրբուց հասցնել 610 միլ.  
և և արականութիւնը՝ 50—60 հազար հատիւ

Ելեկտրասիբեռարտուրյան ընտագմանում պղանը  
նուխտանում և 42 շրջանային ելեկտրոկայաններ  
(Դնեսպրի հիդրոկայանը, առբֆով բանող ելեկտրոկա-  
յան Մալայա Վիշերայում, Մոսկվայի շրջանի ածու-  
խով բանող Բորբիկովյան ելեկտրոկայանը, Զույեովի  
ելեկտրոկայանը Դոնեցի ավագանում և այլն): Դրան-  
ցից 30 կայտնի կառուցման տշխատանքներն արդեն  
սկսվել են: Այդ հսկայական շինարարությունն արտա-  
դրվող ելեկտրական ուժի քանակը հնդամյակի վեր-  
ջում 5 միլիարդ կիլովատտ-ժամից պետք է հասնի մին-  
չե 20 միլիարդ կիլովատտ-ժամի:

Պեկ մեսաղագործության ասպարիզում լինթա-  
զըրվում և մետաղագործական նոր գործարանների  
կառուցումը (Ռւբալի Մադնիտնայա Գորսա շրջանում,  
Կուգնանցկի ավաղանի Տելբես քաղաքում, Ռւկրայինա-  
յում՝ Դնեպրի և Կրիվոյ Ռոգի գործարաններ) և վե-  
րակառուցվելու յեն գոյություն ունեցող գործարան-  
ները:

Ածխարզյունաբերության բնագավառում ծրագրվում և մեծ հանքահողերի կառուցումը թե Դոնեցի ավագանում, և թե Ռուբալում, Կուզնեցկի ավագանում և Մոսկվայի շրջանում:

**ՄԵՔՆԱՅԻՆՈՒՐՅԱՆ** ասպարիզում գործարանների վերակառուցումը և նորերի հիմնումը (ավտոմոբիլների գործարան, վոր արտադրելու յետարեկան՝ 100,000 ավտոմոբիլ, արակտորի գործարաններ Ստալինգրադում և Ռուսական, Սվերդլովսկի ծանր մեքենաշինուած

թյան գործարանը, Ռոստովի գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների գործարանները և այլն) հնարավորություն են տալիս նախատեսելու, վոր մեքենաշինարարությունը կաճի 3<sup>1</sup>/<sub>2</sub> անգամ, իսկ գյուղատնտեսական մեքենաշինության տրտադրանքը՝ 4 անգամ։

Քիմիական արդյունաբերության ասպարիզում ծրագրվում ե քիմիական կոմբինատիոնների շինարարությունը (Բերեզնյակի կոմբինատը Ռուբալում, Յեղորյակալի փոսֆորիտների գործարանը Սոսկվայի շըրջանում, Դոնեցի ավաղանի կոմբինատը և այլն): Փաստորեն հնգամյակի ընթացքում քիմիական արտադրության ասպարիզում հարկավոր կլինի ստեղծել նոր արդյունաբերություն, վորը մինչհեղափոխական Ռուսաստանում գտնվում եր միանգամայն սաղմալին գրության մեջ։

Ժողովրդական ամբողջ տնտեսության հիմնական ներդրումները հնգամյակում, ըստ պլանի, կազմելու յեն 64,6 միլիարդ ռուբլի, մինչդեռ նախորդ հնգամյակում հիմնական ներդրումների ընդհանուր գումարը կազմում եր 26,5 միլիարդ ռուբլի։ Արդյունաբերության հիմնական ներդրումները կազմում են 16,4 միլիարդ ռուբլի՝ ընդգեմ նախորդ հնգամյակի 4,4 միլիարդի։

Գյուղատնտեսությանը հատկացվում ե 23,2 միլիարդ ռուբլի՝ ընդգեմ նախորդ հնգամյակի 15 միլիարդի, փոխադրության գործին հատկացվում ե 11 միլիարդ՝ ընդգեմ նախորդ 2,7 միլիարդի, ելեկտրիֆիկացիային՝ 3,1 միլիարդ՝ ընդգեմ նախորդ 0,9 միլիարդի։ Հիմնական ներդրումների աճմանը զուգընթաց

համապատասխան կերպով աճում և ամբողջ արդյունաբերության արտադրանքը, վոր 1927—28 տարվա 18,3 միլիարդից 1932—33 տարում հասնելու յի 43,2 միլիարդ ռուբլու (մինչողական արդյունաբերական արտադրանքի ավելի քան 3 տասնամ աճում): Դյուզատնահասության արտադրանքը 16,6 միլիարդից հասնելու յի 25,8 միլիարդի (մինչողական չափը գերազանցելու յի ավելի քան մեկեկես անդամ):

Փողովբական ամբողջ տնտեսության զուտ արտադրանքը 24,4 միլիարդ ռուբլուց հասնելու յի 49,7 միլիարդի:

Ենորհիվ տնտեսության զարգացման արագ տեմպի, վոր գերազանցում և կազիտալիստական ըոլոր յերկրների զարգացման տեմպը, ելապես փոխվում և Խորհրդային Միության տեսակարար կշիռը համաշխարհային արտադրության մեջ, թուջի (չուգունի) արտադրության ասպարիզում ԽՍՀՄ վեցերորդ տեղից անցնում և ինքը առաջ առաջ (Գերմանիայից և Միացյալ Նահանգներից հետո), քարածուխի ասպարիզում հինգերորդ տեղից անցնում և չորրորդ տեղը (Միացյալ Նահանգներից, Անգլիայից և Գերմանիայից հետո):

Յերկրորդ՝ հնգամյա պլանն ապահովում և սոցիալիստական հաօքածի վեռական ուժեղացումը բարպարագան յեզ գուրզում: Սոցիալիստական հատվածի հիմնական ֆոնդերի տեսակարար կշիռը 52,7 տոկոսից բարձրանում և 68,9 տոկոսի, ընդլայնում սոցիալիստական հատվածի ընդհանուր արտադրանքի տեսակարար կշիռն արդյունաբերության մեջ 80 տոկոսից հասնում և 92 տոկոսի, գյուղատնտեսության մեջ 2-ից 15 տոկոսի, մանրածախ առեարի մեջ՝ 75-ից 91 տոկոսի:

Ցերուրգ՝ հնգամյա սլլոնի իրականացումն ապա-  
հովում և զյուղաբնեսության չափազանց հետամնա-  
ցության վերացումը յեզ իիմնականում հացահափ-  
կային պրոբլեմի լուծումը՝ հիմք ընդունելով զյու-  
ղացիական անտեսության կոլլեկտիվացման, խորհրդա-  
ցին անտեսությունների շինարարության և չքավոր  
ու միջակ տնտեսություններին ովնելու ձեռնարկում-  
ների լայն զարգացումը։ Բայ սլլանի, գյուղատնտե-  
սության ընդհանուր արտադրանքի աճումն ավելանում  
է 54 տոկոսով, իսկ նրա ապրանքալին արտադրանքի  
աճումը՝ 138 տոկոսով։ Կոլլեկտիվ անտեսությունների  
մասն ընդհանուր արտադրանքի ասպարիզում 1-ից  
հասնելու յե 11,4 տոկոսի Գյուղատնտեսության հա-  
մայնացված ամբողջ հատվածի ցանքսերի տարածու-  
թյունը, հնգամյակի վերջում, հասնելու յե 27 միլիոն  
հեկտարի և կազմելու յե ցանքսերի ամբողջ տարածու-  
թյան 17,5 տոկոսը (նախորդ 1932 թվականի բերքի,  
յերբ համայնացված հատվածը կազմելու յե ցանքսերի  
ամբողջ տարածության 13 տոկոսը), և ապահովելու յե  
նրա տեսակարար կշռի աճումը՝ 15,5 տոկոսով՝ ընդ-  
հանուր արտադրանքի մեջ և 43 տոկոսով՝ հացահա-  
փիկային մշակույթների ապրանքային արտադրան-  
քի մեջ։

Գյուղատնտեսության անհատական հատվածի  
թվական աճումը դադարում է, վորովհետև ծրագրված  
է համայնացված հատվածի մեջ ներգրավված աղջա-  
բնակալթյունը հասցնել 20 միլիոն մարդու։

Այդ բոլորի հետ միասին և այդ բոլորի հիման  
վրա, հնգամյա սլլանն ապահովում ե 1) բանվօր գյո-  
ւղակարգի յեզ զյուղի աօխառավոր մասսաների նյու-

բական ու կուլտուրական մակաւզակի գգալի վերելքը (հնգամյակի վերջում լիովին իրականացվելու ցիցթժամբա բանվորական որը, ժողովրդական լեկամուտը՝ տնփոփոխ զներով, 1927—28 տարվա 24,4 միլիարդ ռուբլուց հասնելու լի 49,7 միլիարդ ռուբլու, այսինքն աճելու լի 103 առկաութ. արդյունաբերական բանվորների իրական (ռեալ) աշխատավարձը հնգամյակի վերջում աճելու լի 71 տոկոսով, ընդգործում ամբողջ բանվոր գասակարգի յեկամտի տեսակարար կշեռը՝ ժողովրդական անտեսության ամբողջ յեկամտի նկատմամբ՝ 32,1 տոկոսից բարձրանալու լի 37 տոկոսի. հոգագործ ազգաբնակության յեկամուտն աճելու լի 67 տոկոսով). 2) բանվոր գասակարգի դեկավառող գերե ամրացումը՝ գյուղացիության հիմնական մասսաների հետ շաղկապվելու նոր ձևերի զարգացման բազայի վրա. 3) պրոլետարական գիկուառությաի սեռական չեվ բաղաբական գիրքերի ամրացումը՝ ներքին և արտաքին գասակարգային թշնամիների դիմնրա մզած ովայքարում. 4) ազգային հանրապետությունների յեվ հետամնաց մարգերի ու օրշանների անտեսական և կուլտուրական վերելքը. 5) յերկրի պատվանունակուրյան գգալի ամրացումը լիկ արդ բոլորի հիման վրա՝ 6) մի խուռ հայլ գետի առաջ այն լողունգի իրականացման ճանապարհին, վորն առում և՛ հասնել և գերազանցել տեխնիկական-տնտեսական տեսակետից կապիտալիզմի առաջավոր յերկըրներին:

Ինդուստրիացման լարված տեմպը, նրա իրականացումը մեր տեխնիկական հետամնացության պարմաններում, բազմամիլիոն մանրագույն գյուղացիա-

կան տնտեսությունները կոլլեկտիվ աշխատանքի հիման վրա վերակառուցելու խնդիրների բարդությունը, կապիտալիստական շրջապատման մթնոլորտը, ինչպես և գասակարգալին պայքարի սրումը յերկրում, կապիտալիստական տարրերի ուժեղացած դիմադրությունը,—այս բոլորն ստեղծում են զգալի դժվարություններ հնդամյա պլանի իրականացման համար։ Այդ զըժվարություններին հաղթահարելու համար անհրաժեշտ ելակատար կերպով իրականացնել (ըստ հնարավորության նաև վերադանցել) վորակական այն բարձր զիրքավորումները, զոր ուրվագծել են հնդամյա պլանում, այն և՝ արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրականությունը բարձրացնել 110 տոկոսով, արդյունաբերական արտադրանքի ինքնարժեքն իջեցնել 35 տոկոսով և շինարարության արժեքը՝ 50 տոկոսով, փոխադրությունների ինքնարժեքն իջեցնել 25 տոկոսով, բերքատվությունը բարձրացնել 35 տոկոսով, ցանքսերի տարածությունն ընդարձակել 22 տոկոսով, արդյունաբերության մեջ մսխող վառելանյութերի տեսակարար կշիռն իջեցնել 30 տոկոսով և տրանսպորտի ասպարեզում՝ 13 տոկոսով, նմանապիս լիովին կհնասագործել կոլլեկտիվ և խորհրդային տընտեսությունների շինարարության ծրագիրը, ամրացնել աշխատանքալին կարգապահությունը, պայքարել գործարքումների գեմ, ապահովել արդյունաբերությունն ու գլուղատնտեսությունը ղեկավարների կադրով և ստեղծել կարմիր մասնագետների նոր կադրեր, բարձրացնել պլանային-կարգավորող սկզբունքի վերը ժողովրդական ամրող տնտեսության մեջ։

Յերկու կարևորագույն պայմաններ հանդիսա-

նում են ճնգամյա ողլանի իրականացման անհրաժեշտ  
 նախադրյալը՝ Պռաջինը՝ աշխատավորների լայնա-  
 գույն մասսաների և տռաջին հերթին պրոլետարիատի  
 ակախության մորթիլացիան, բանվոր գասակարգի  
 միլիոնավոր մասսաների ներզրավումը սոցիալիստա-  
 կան շինարարության և անտեսության կառավարման  
 դործին։ Յերկրորդ՝ անխնա հականարդած կուսակցու-  
 թյան հիմնական գծի իրականացման ասովարիդում  
 նկատվող ամեն անսակ աստանումներին, մանավանդ  
 աջ թեքմանը և գեղի նու հաշտվողական վերաբեր-  
 մունքին, վորպես կուսակցության գլխավոր վանդին  
 ներկա պայմաններում։ Աջ թեքումը մինահանջ և այն  
 գժվարությունների առջե, վորոնք կապված են դյու-  
 զատնահսության սոցիալիստական վերակառուցման և  
 յերկրում զասակարգակին պայքարի սրման հետ։ Աջ  
 ուկոնիստանները չեն ըմբանում իդուստրիալի զարգաց-  
 ման արագ տեմպի քաղաքականություն կիրառելու  
 անհրաժեշտությունը, վորպես միակ ուղին, վորով հնա-  
 րավոր և հաղթահարել այդ գժվարությունները, չեն  
 հասկանում բեկման շրջանի առանձնահատուկ պար-  
 մաններն ու բնույթը մեր զարգացման մեջ, ցուցարե-  
 րում են ոպպորտյունիզմին հասուլ թուլակամություն  
 և այդ պատճառով տեղի յեն տալիս գոյություն ունե-  
 ցող գժվարությունների առջե, կարծելով, թե դրանք  
 կարելի լի լուծել, հրաժարվելով արտադրության մի-  
 ջոցների արտադրման արագ տեմպից և վերաբաշխելով  
 նյութական միջոցները՝ թեթև արդյունաբերության  
 ավելի արագ զարգացման ուղղությամբ, հավասարվե-  
 լով Շնեղ տեղերից կողմը, կրծատելով հիմնական ներ-  
 դրումները, սահմանափակելով խորհրդային և կոլեկ-

տիվ անտեսությունների շինարարության ընդունված տեմպը, թուլացնելով կապիտալիստական տարրերին դուրս մղելու տեմպը, հուզեր կապելով կուլակալին անտեսության զարգացմանը, շարունակ զիջումներ անելով միջակին: Աչ ուկունիսանների արդ զիծը հանդիսանում և ռկուսակցության լինինան քաղաքականությունից ուղղակի հրաժարվելու մի արտահայտություն»:

Այդ պատճառով կոնֆերենցիան մատնանշեց, վոր օմիմիան անինա հակահարվածը բայլշելկական հիմնական գծի կիրառման ասպարիզում նկատվող ամեն տեսակ տատանումներին,— մի գծի, վորի իրականացումը նշանակում և գլուղացիության հետ բանվոր դասակարգի դաշինքի ամրացումը՝ բանվոր դասակարգի դեկավարող դերի ել ավելի ուժեղացմամբ,— կարող ե ապահովել հնգամյա պլանի առաջադրած սոցիալիստական շնորհարության խնդիրների լուծումը»:

## A 9/36 ԳՅՈՒՂԱՑՆՑԵՍՈՒԹՅԱՆ ԲԵՐՉԲՑՄԱՆ ԱԽՐԱՆՔ ՅԵԼ ՄԻԶՅԻ ՀԾՐԿԻ ԹԵԹԵՎԱՑՈՒՄԸ

Կոնֆերենցիան ուշիւուշով քննարկեց գլուղատընտեսության բարձրացման և միջակի հարկերի թեթեւացման հարցերը:

Կոնֆերենցիան գտավ, վոր վերականգնման շըրջանի և ժողովրդական անտեսության վերակառուցման առաջին քայլերի արդյունքները գյուղատնտեսության մեջ արտահայտվեցին նրանով, վոր չքավոր և միջակ տնտեսությունները տեր դաշնան վհչ միայն իրենց շնչապատկան հողերին, ալի նախկին կալվածատիրական, նրանց հանձնված պետական հողերի մեծ մա-

սին և կուլտակալիքն այն հողերին, վորոնք խըլած էլին  
կուլտակներից, արտահայտվիցին միջակի, վորպիս հո-  
գագործության կենարոնական անձնավորության, ամ-  
րացմամբ, չնայած զյուղի հարաճուն շերտավորման,  
վորն այզովիսով պրոլետարիատի դիմաւառ բայի որով  
այլ բնուլիթ և կրում, քան կապիտալիզմի շրջանում։  
Ապա այդ արդյունքներն արտահայտվեցին նրանով,  
վոր աճեց չքավոր և միջակ անտեսությունների ապա-  
հովվածությունը արագորության միջոցներով։ բարձ-  
րացավ նրանց ազրիկուլտուրական մակարդակը, ըն-  
դարձակվեցին տեխնիկական մշակույթների ցանքսե-  
րը, զարգացավ զյուղատնտեսության ինդուստրիացումը;  
զարգացավ ներգյուղային և միջդյուղային հողաշինա-  
րարությունը, ընդարձակվեց բազմագաշտ ցանքսա-  
շրջանի տարածությունը, աճեց զյուղատնտեսական  
մեքենաների և հանքային պարարտանյութերի հալ-  
թայթումը, աճեց զյուղացիական տնտեսության կոռ-  
պերացումը, ձեռնարկվեց խորհրդային անտեսություն-  
ների կազմակերպման և կոլլեկտիվ անտեսությունների  
զարգացման։ Ալդապիսով զյուղատնտեսության մեջ գո-  
յություն ունեն վերակառուցման բնուլիթ կրող մի  
շարք պրոցեսներ, վօրոնք հիմնովին հերքում են աջ  
թեքման ներկայացուցիչների արծարծած տեսությու-  
նը՝ զյուղատնտեսության իրքեւ թե տեղի ունեցող «գե-  
դրագացիայի» (անկժման) պրոցեսների մասին։

Գյուղատնտեսությունը զեղի անկում չի դիմում,  
այլ զարգանում և սակայն նրա զարգացումն ընթա-  
նում և չափազանց լանդաղ տեմպով, վորովհետեւ մա-  
նըր և մանրագույն զյուղատնտեսությունը վերին ասց-  
տիճանի կոսորտակային և, և այդ կոտորակախնության

շնորհիվ գլուղատնտեսական աշխատանքի արտադրականությունը չափաղանց ցածր է, այդ պատճառով ել սահմանափակ հնարավորություններ կան այդ ասպարիզում դյուղատնտեսական մեջենաներ, արհեստական պարարտանութեր և ավելի բարդ ազդումիջոցներ գործադրելու: Դյուղատնաեսության հենց ծայրահեղ կոտորակալայնությունը և նրա տեխնիկական հետամնացությունը, նրա կիսանատուրալ բնույթը կարեորագույն պատճառներն են, վոր նրա զարդացման տեմպը չափաղանց յետ և մնում արդյունաբերության զարգացման տեմպը չափից և սոցիալիստական շինարարության պահանջներից: Այդ հանգամանքն առանձնապես սուրկերպով անդրադառնում և հացահատիկալին տնտեսության վրա, վորը չի կարող աղբյուր չհանդիսանալ մեր տնտեսական դժվարությունների համար:

Աջ թեքման ներկայացուցիչների կարծիքով՝ այդ դժվարությունների գոյությունը վկայում է, վոր մենք չափից դուրս ծավալում ենք ինդուստրիացումը, խորհրդակին և կոլլեկտիվ տնտեսությունների շինարարությունը, և չափից դուրս հույզ ենք տալիս կուլտիւրակին: Ժամանակին աջ թեքման ամենից ավելի ամբողջական ներկայացուցիչներից մեկը՝ ընկերությունների հայտարարել եր, վոր Շկուլակային տնտեսությունն առայժմ դեռ պետք ե մեզ, վոր այդ իսկ պատճառով մենք չպետք ե խոչընդոտ հանդիսանանք նրա արտադրությանը, վոր մեզ համար միևնույն է, թե վհրատեղից ենք ստանում մենք մի ավելորդ միջինոն տոնն հացահատիկ՝ կոլլեկտիվ և խորհրդակին տնտեսություններից, թե կուլակից: Հարկավ դա այնպիսի մի տեսակետ է, վորը հացահատիկային դժվարություններից լելք ե

փնտառում գրուղի զարգացման կտակիտալիստական ուղիները ծավալելով:

Հատկապես ներկայումս, յերբ մեր անտեսությունն անցավ իր վերականգնման շրջանից, առանձնապես սուր քնուրյթ ունի գյուղատնտեսական խոշոր արտադրության զարգացման հարցը, «Վերականգնման շրջանը հիմնականում վերջանալիս, ասում ե կոնֆերհնցիտյի բանաձեռը, իերեան ևն զալիս մանր տնտեսության զարգացման և մանավանդ նրա ապրանքայնության աճման սահմանափակ հնարավորությունները՝ նրա տվյալ չափերի և արտադրության յեղանակների պայմաններում»:

Այդ իսկ պատճառով ներկայումս առանձնապես սուր քնուրյթ ունի գյուղացիական անտեսության զարգացման ուղիների հարցը, այն հարցը, թե ինչ ճանապարհով պետք է ընթանա գյուղացիության մեջ խոշոր արտադրություն ստեղծելու պրոցեսը՝ արդյոք կուլտակային անտեսությունների հետագա աճմամբ և աճրացմամբ և գյուղացիության հիմնական մասսայի դգալի քայլաբմամբ ու աղքատացմամբ՝ կապիտալիստական խոշոր անտեսությունների ստեղծման ուղիով, թե համայնացված խոշոր հողագործության ստեղծման ուղիով:

Աջ թեքման ներկայացուցիչներն ընկնում են գյուղի կապիտալիստական զարգացման կապանքներն արձակելու ուղին, լենթարկվելով մանր բուրժուական տարերքի ներգործությանը և այդպիսով շեղվում են կուսակցության հիմնական գծից՝ կուսակցության քաղաքականությունը բուրժուական իդեոլոգիային հարմարեցնելու ուղղությամբ։ Հենց այդտեղից ե բղխում

նրանց վայնասունը «զյուղացիական տնտեսության անկման» մասին, այն մասին, թե կուսակցությունը վարում է գյուղացիության ռազմական-ֆիզալական շահագործման քաղաքականություն:

Վերակառուցման շրջանի պայմաններում գյուղատնտեսության զարգացման ուղիների հարցն առանձնապես սուրբ բնույթի ունի Զարգացման սոցիալիստական ուղին նշանակում և կուղակային տնտեսության դուրս մղումը, նրա անկումը: Այս ուկլոնիստները յենթարկվելով բուրժուական իդեոլոգիակին, հակված են կուղակային տնտեսության անկումը համարել գյուղատնտեսության անկում, կուղակին դուրս մղելու գիծը, վոր վարում և կուսակցությունը, նրանք համարում են չքավոր և միջակ անհատական անահետքյուններին ոգնելուց հրաժարում, գյուղատնտեսության զարգացման կապիտալիստական ուղղուն սոցիալիստական ուղին հակադրելը նրանք ընդունում են վորպես չքավոր և միջակ անհատական տնտեսությունների զարգացման հակադրումը կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների զարգացման: Այսինչ կուսակցությունը խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների զարգացման հակադրումը կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների զարգացման մասին անհատական տնտեսություններին ոգնելու գործին:

Կուսակցությունը յենում է այն հանգամանքից, վոր «խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների մաքսիմալ հնարավոր զարգացման պայմաններում, մոտակա տարիներում գյուղատնտեսական արտադրանքի հիմնական աճումը տալու յեն չքավոր և միջակ անհատական տնտեսությունները, վոր մանր տնտեսությունը դեռ չի սպառել և շուտով չի սպառի

իր ունեցած հնարավորություննները։ Սակայն միենալուն ժամանակ կուսակցությունը տեսնում և չքավոր և միջակ անհատական տնտեսությունների զարգացման հնարավորությունների սահմանափակ լինելը, տեսնում ե, վոր գյուղատնահսության ծայրահեղ հետամիացությունը չի կարելի հաղթահարել միմիայն այդ անհատական տնտեսությունների զարգացմամբ. կուսակցությունը տեսնում ե նաև, վոր չի կարելի տնտեսության կտավիտալիստական տարբերի գուրս մզելը համապեկ կուլտակին տնտեսությունների զարգացման ծրագրերի հետ, ուստի կուսակցությունը արդեն 15-րդ համագումարում մտանանշեց, վոր աներկա զրջանում գյուղացիության անհատական մանր անտեսությունները միացնելու և խոշոր կոլեկտիվների վերածելու խնդիրը սկսաք և առաջադրվի վորպիս կուսակցության հիմնական խնդիրը գյուղում։ Հենց այն օպատճառով, վոր աջ ուկլոնիստաները դեմ են 15-րդ համագումարի այդ հիմնական գիրեկտիվին, նրանք՝ հանձինս ընկ. Ֆրումկինի, ժամանակին առաջադրեցին «յետ, դեպի 14-րդ համագումարը» լոգունդը, այսինքն դեպի յետ կուսակցության հիմնական այն խնդրից, վոր առաջադրել և 15-րդ համագումարը գյուղի նկատմամբ։

16-րդ կոնֆերենցիան մտանանշեց, վոր «Միայն արդպիսով, զաւգակցելով արմառական յեկ կարեվորագույն խնդրի՝ սոցիալիստական խռուց եղագութուրյուն կազմակերպելու խնդրի լուծման աօխատանքը օարեային ջանքոր յեկ միջակ անհատական սննդուրյուններին առույթ լայն, կազմակերպչական, անխնիկական յեկ սննդուրյուն սուլց աղու-

իետ և կուլակի աճման հետզհետե ուժեղացող սահմանափակումով ե, վոր կուսակցությունը կարող է կենսագործել իր առջև զրված ինպիրը, այն եւ դառնալ պարզաբնտեսական աշխատանքի արտադրականությունը բարձրացնելու գործի կազմակերպողն ուղեկավարողը:

Աջ ուկյոնիստաները զբարուում են կուսակցության դիմ, պատկերացնելով նրա քաղաքականությունը գյուղում վորպես մի սահում դեպի տրոցկիզմի զիրքերը, տրոցկիզմի, վորն աշխատում եր կուսակցության վզին փաթաթել գյուղացիական մանր տնտեսության սոցիալիստական արդյունաբերության կողմից և լանվելու տեսությունը, այն տեսությունը, թե դյուղացիական մանր տնտեսությունը պետք է համարվի «արդյունաբերության գաղութը»: Իրոք դա մի զագրելի զրպարտություն և կուսակցություն դիմ, վորովհետե, ինչպես 16-ըդ կոնֆերնցիան մատնանշեց,

«Խորհրդային չերկրում համանացված խոշոր տնտեսության զարդացումը տեղի է ունենում վոչ թե մանր և մանրտգույն տնտեսությունների կլանումով, նրանց կործանմամբ, վոչնչացմամբ և քարքայմամբ, վոչ թե նրանց դիմ պայքարելով, այլ նրանց տնտեսական բարձրացումով, աճումով, առաջ քաշելով դեպի տեխնիկալի, կուլտուրալի և կազմակերպության բարձրագույն մակարդակը: Համայնացված խոշոր տնտեսությունը չի հակադրվում չքավոր և միջակ անհատական տնտեսություններին վորպես նրանց թշնամի մի ուժ, այլ կազմում ե նրանց հետ վարպես ողնության մի ազըյուր նրանց համար, վորպես աջակցության կազմակերպիչ նրանց աստիճանաբար միանալու

և խոշոր անտեսաւթյուն կազմելու գործում։ Դրան համապատասխան, կուսակցությունը կատարում է իր գործնական աշխատանքը գյուղում՝ գուգակցելով չքավոր և միջակ անհատական անտեսություններին ցույց տրվող անտեսական, տեխնիկական և ազրիկուլտուր ոգնությունը՝ հիմնված իր անտեսությունը բարելավելու նրա անմիջական շահագրգուժածության վրա, — պետական և կոլեկտիվ խոշոր հողագործության դիրքերի ամբացման և ընդուրման հետ։

Փողովրգական անտեսության վերակառուցման աշխատանքի լայն ծավալման անցնելը վոչ միայն լերեան և բերում գյուղացիական մանր անտեսության զարգացման հնարավորությունների սահմանափակ լինելը այլև միևնույն ժամանակ ստեղծում է նախագրալներ, փորոնց վրա հենվելով հնարքտվորություն և սահացում լայն ծավալել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, գյուղացիական անտեսությունների կոլեկտիվ աշխատանքի անցնելու գործը։ Այդ աշխատանքի ասպարիզում խորհրդացին իշխանությունը և կոմմունիստական կուսակցությունը հենվում են արդյունաբերության արագ զարգացման և մասնավորապես գյուղատնտեսական մեքենաների արտադրության արագ աճման վրա, գյուղացիական անտեսությունը, պլանավորման հողի ազդայնացման վրա, վոր եժանացնում և գյուղատնտեսական արտադրությունը, գյուղում կապիտալիզմի աճման սիստեմատիկ սահմանափակման վրա, վոր փրկում և չքավորին և միջակին կուլակին ստրուկ լինելուց։ Խորհրդացին իշխանությունը և կոմմունիստական կուսակցությունը հենվում են արտադրական կոոպերաց-

ման աճման և խոշոր տնտեսությունների առավելությունները չքավորների ու միջակների համար արտադրական պրոցեսների միացմամբ, ոգտագործելու հնարավորության վրա, վարկի վրա, և վերջապես անպայման աջակցության վրա, վոր ցուց են տալիս բանվոր դասակարգը և գյուղի աշխատավոս մասսաները կուսակցության քաղաքականությանը՝ գյուղատնտեսության բարձրացման ասպարիզում:

Աջ ուկլոնիստները չեն տեսնում այն նոր ետապը, վոր թեակոխել ենք մենք մեր անտեսության զարգացման ճանապարհին, նրանք չեն տեսնում պրոլետարական ու ոռության հնարավորությունները՝ ազգեցություն գլուխություն վարդացման ուղիների վրա, չեն տեսնում, վոր ուժեղացել ե գյուղի չքավոր և միջակ խավերի ձգտումը գեղի արտազրական կոռպերացումը և կոլեկտիվացումը։ Դրան ապացույց կարող ե ծառայել նրանց մատնանշումը Լենինի այն խոսքերի վրա, թե՝ «չի կարելի միանգամից զուտ և նեղ կոմմունիստական գաղափարներ մացնել գյուղը։ Մինչև վոր մենք գյուղում նյութական հիմք չունենանք կոմմունիզմի համար, այդ, կարելի յե ասել կլինի կոմմունիզմի կործանումը»։ Նրանք լուսթյան են մատնում այն հանգամանքը, վոր Լենինը նաև ասում եր, թե «Յեթե մենք կարողանայինք տալ 100 հազար առաջնակարդ տրակտորներ, հայթալիթել նրանց բենզին, հայթալիթել նրանց մեքենավարներ (գուք շատ լավ պիտեք, վոր առաջմ այդ մի ֆանտազիա յե), ապա միջակ գյուղացին կասեր. «Յես կոմմունալի (ալսինքն կոմմունիզմի) կողմնակից եմք. Բայց այդ հո, այժմ արդեն ֆանտազիա չի, գյուղին մենք տվել ենք ար-

գեն 36 հազար տրակտոր, իսկ հնդամլակի վերջում  
միայն մեր յերկրում տրտադրվող տրակտորների թիվը  
հասնելու յև տարեկան 50—60 հազարի։ Պարզ է, վերա-  
կօտուցման շրջանը նշանակում է, ոյսուղում ստեղծվում  
է նյութական բազա կոմմունիզմի համար, վոր արդ  
պատճառով այժմ նոր ձևով պետք է դրվեն շաղկապի  
հարցերը։ Յեթէ մինչեւ այժմ գյուղի հետ զոդումը  
հիմնված էր առավելագես փոխանակության վրա, ապա  
այժմ ծաղում և աճում են գյուղացու հետ պրոլետա-  
րիատի շաղկապի նոր ձևերը։ Վերջիններս արտահայտ-  
վում են բանվոր գյանակարգի և գյուղացիության  
հետզհետեւ աճող արտադրական կառերով և լրացնում  
են շտղկապի հին ձևերը։ «Շաղկապի նոր ձևերի որոք  
իրադրժման հնարավորության հարցում վճռական  
նշանակություն ունի արգյունաբերության հետապա  
զարգացումը»։

Զարգացման ներկա շրջանում, շաղկապի նոր  
ձևերը վճռական նշանակություն պետք է ստանան։

Շաղկապի կարեւորագույն ձևերը վորոնց նշանա-  
կությունը ապրեցարի։ մեծանալու յի, հետևյալ-  
ներն են։

ա) Նոր խորհրդային օնտեսությունների կազմա-  
կերպումը և հին խորհրդային անանությունների բա-  
րելավումը վորպես գյուղատնտեսական ֆարմիկներ և  
վորպես չքաղցոր ու միջակ անհատական գյուղացիա-  
կան տնտեսություններին բազմակողմանի ոգնու-  
թյուն հասցնելու կենտրոններ։

բ) Նոր կոլլեկտիվ օնտեսությունների ստեղծումը  
և հների զարգացումը վորպես բաժան-բաժան գյու-  
ղացիական տնտեսությունների արտադրական կո-

ոպերացման և համայնացված տնտեսություններ կազմելու բարձրագույն ձևեր.

դ) մեթենաների յեզ օրակառների պետական ու կոռագերատիվ վարձակալանների ցանցի լայն զարգացում վորպես անհատական տնտեսությունների ամբողջ մասսայի արտադրական կարիքը ադուցեսների համայնացման մեթոդներից մեկը.

դ) արտագրական կոռագերացման ամեն կերպ զարգացումը նրանում համայնացված աշխատանքի տարրերի հարածուն ուժեղացմամբ.

լի) զուրղուտնաեսական մթերքների մասսայական կանոնագիրայի ել ավելի զարգացումը, վոչ միայն վորպես զյուղատնաեսության զարգացման համաձայնեցում արդյունաբերության հետ, այլև վորպես չքավոր և միջակ տնտեսությունների արտադրուկանության մակարդակի բարձրացման մեթոդ.

զ) Պետական և կոռագերատիվ որդանների աշխատանքի զարգացումը մանր և մանըագույն տնտեսությունների բերեածվուրյան բարձրացման առդարիգում, վորպես մի միջոց՝ ողտագործելու մանր և միջակ տնտեսությունների արտադրականությունը բարձրացնելու զեռ զոյություն ունեցող ուղիներն ու հնարավորությունները (հողաշինարարություն, վարձակալություններ, սերմագտման կայաններ, նորոգման արհեստանոցներ, պայքար մասսատունների գեմ, զյուղացիական հասարակ սերմերի փոխարինումը ընտիր սերմերով և այլն):

Կոնֆերենցիան 1) ուրվագծեց շաղկապի նոր ձևերի ամրացման և միջակի հարկերի թեթևացման կարևորագույն միջոցներ, վորոնցից առանձնապես

ընդգծեց մի կարևոր խնդիր, այն եւ զեկրեառւմ նաև խատիսված ժամկետներում և նրանում մատնանշված չափերով կիրառել այն միջոցները, վորոնք ապահովում են ճնշամյակի վերջում մեր չերկրում բերքատվության բարձրացումն առնվազը 30—40 տոկոսով (ամելի կարճ ժամանակամիջոցում հողաշինարարության ավարտումը, հասարակ սերմերի փոխարինումը ընտիր տեսակավոր սերմերով, բոլոր հացահատիկների զաման և տեսակավորման միջոցներ, ֆեասատուների պեմ պայքարելու միջոցների արաւզրության ընդարձակում, վարձակայների և նորոգման արհեստանոցների ցանցի ընդարձակում, ամենազարդ արդիկուլտուր ձեռնարկումների առածում, գլուղատնտեսական գիտելիքների առածում և զբուղատնտեսական ոգնության ուժեղացում, 2) հավանություն ավելց գյուղմիասնարկի որենքի հիմնական սկզբունքներին և միջակի հարկերի թեթեացման նպատակով կիրառվող ձեռնարկումներին, շփորոնք հացի գնի արդեն կիրառված բարձրացման հետ միասին, պետք է ել ավելի շահագրգուն միջակին այն ձեռնարկումների իրականացմամ, վորոնք բարձրացնում են նրա անտեսության կուլտուրական և տեխնիկական մակարդակը, 3) ավելց մի շարք դիրեկտիվներ գյուղատնտեսական կոռուպտացիայի աշխատանքների համար, գտնելով, վոր նրա աշխատանքն առ այժմ գեռ շի կազող գոհացուցիչ և բավարար համարվել, թե կոլլեկտիվ խոշոր անտեսության աճումը կաղմակերպելու և նրան աջակցելու գծով, և թե չքավոր ու միջակ անհատական տնտեսություններին ապրիկուլտուրական ու տեխնիկական ոգնություններ պահպան պետք են դառնաւ գյուղա-

անտեսական կոռուպհրացիայի արտադրական աշխատանքի կարևորագույն մեթոդներից մեկը գյուղատնտեսության բարձրացման և նրա վերակառուցման բնագովում, 4) կոնֆերենցիան լիովին հավանություն տվեց կենտրոմի պլենումի վորոշումներին խորհրդային նոր անտեսություններ կազմակերպելու մասին, վորոնք արտադրական ծրագրի, հնգամյակի վերջում, արտադրելու թեն վոչ պակաս քան 1640,000 տոնն ապրանքային հացահատիկ: Կոնֆերենցիան անհրաժեշտ համարեց հնգամյակի վերջում Զերնոտրեստին հատկացնել 10 - 12 միլիոն հեկտար հող և ցուցումներ տվեց հին խորհրդային անտեսությունների աշխատանքը բարելավելու մասին, 5) գտնելով, վոր կոլտնտեսություններն աճում են իրենց գյուղացիական մասսաների, այն ել վոչ միայն չքավոր, ալև միջակ մասսաների ինքնագործունելության և ցածրեցնելող նախաձեռնության հիման վրա, և վոր խոշոր հողագործության առավելություններն արդեն ներկայումս իսկ արտացոլվում են կոլտնտեսություններում, կոնֆերենցիան մատնանշեց, վոր անհրաժեշտ և ուժեղացնել կոլտնտեսություններին մեքենաներ և մանավանդ տրակտորներ հայթայթելու գործը. ուժեղացնել արտադրական պրոցեսսների համայնացման աշխատանքը համայնական հողամշակման ընկերություններում, ամեն կերպ աջակցել ամբողջ գյուղերի աշխատանքի կոլեկտիվ ձևերի անցնելու նախաձեռնությանը Ալդ նպատակով ոգտագործելով կոնտրակտացիան մեքենաների ու տրակտորների վարձակայանները և խմբերը, աջակցություն ցուց տալ հին կոլտնտեսությունների ամրացմանը, կոլտնտեսություններին

սպնելիս առավելություն տալ խոշոր կոլտնահսություններին, ուժեղացնել կոլտնահսությունների ընդհանուր քաղաքական և կուլտուրական աշխատանքը և ստեղծել մասնագետների և կազմակերպիչների կազմի կողմեկաբիզ ու խորհրդացին տնտեսությունների համար և ուժեղացնել կոլտնահսությունների բաղմակազմանի սպնությունը չքափոր և միջակ անունություններին. Վերջապես կոնֆերենցիան մի շարք գիրքների մասնակի առեց խորհրդացին սրբանների, մասնավորապես խորհուրդների և հողբաժինների գյուղատնտեսական հանձնաժողովների աշխատանքն ուժինացնելու մասին, ինչպես և մատնանշեց չքափորների շարքերում աշխատանքն ուժեղացնելու անհրաժեշտությունը:

